# ՀՀ կառավարության պարտքը

## 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

# ԱՄՍԱԿԱՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

***Տեղեկագիրը թարմացվել է 20.04.2023թ. դրությամբ***



*Սույն տեղեկագրի հրապարակման նպատակն է ապահովել կառավարության պարտքի գծով թափանցիկությունը, հաշվետվողականությունը, կանխատեսելիությունը և հրապարակայնությունը ու սպառողների լայն շրջանակներին տեղեկացնել կառավարության պարտքի գծով կատարված գործառնությունների և վերջին զարգացումների վերաբերյալ:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


- Պետական պարտքը
- Կարևոր իրադարձությունները
- Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին
- Կառավարության պարտքի սպասարկումը (տոկոսավճարներ)
- Կառավարության պարտքը բնութագրող ցուցանիշները և 2022 - 2024 թթ. ուղենիշները
- Կառավարության պարտքի մարման և սպասարկման ժամանակացույցը
- Կառավարության պարտքի կառուցվածքը
- Պետական գանձապետական պարտատոմսերը
- Գանձապետական պահառու
- Կառավարության արտաքին վարկերը և փոխառությունները
- Արտարժութային պետական պարտատոմսերը
- Կառավարության երաշխիքները
- Ամփոփ տարեկան ցուցանիշները և գործակիցները
- Սահմանումները և մեթոդաբանությունը

# Պետական պարտքը (1)

- **Պետական պարտք**
  4,187 մլրդ դրամ
  10,638 մլն ԱՄՆ դոլար
  - **Կառավարության պարտք**
    3,970 մլրդ դրամ
    10,086 մլն ԱՄՆ դոլար
    - **Արտաքին պարտք**
      2,320 մլրդ դրամ
      5,894 մլն ԱՄՆ դոլար
    - **Ներքին պարտք**
      1,650 մլրդ դրամ
      4,192 մլն ԱՄՆ դոլար
  - **Կենտրոնական բանկի արտաքին պարտք**
    217 մլրդ դրամ
    551 մլն ԱՄՆ դոլար
    - **Կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր**
      34 մլրդ դրամ
      87 մլն ԱՄՆ դոլար

# Պետական պարտքը (2)

| մլրդ դրամ | 31.12.2021 | 31.12.2022 | Փոփոխություն | |
|---|---|---|---|---|
| | | | մլրդ դրամ | % |
| ***ՀՀ պետական պարտք*** | ***4,429.6*** | ***4,186.7*** | ***(242.9)*** | ***(5.5)*** |
| **ՀՀ կառավարության պարտք** | **4,209.8** | **3,969.7** | **(240.2)** | **(5.7)** |
| *արտաքին պարտք* | *2,972.4* | *2,319.7* | *(652.7)* | *(22.0)* |
| արտաքին վարկեր և փոխառություններ | 2,151.6 | 1,772.6 | *(379.0)* | (17.6) |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | 53.9 | 44.0 | *(10.0)* | (18.5) |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | 763.1 | 500.2 | *(262.9)* | (34.4) |
| արտաքին երաշխիքներ | 3.8 | 2.9 | *(0.9)* | (22.6) |
| *ներքին պարտք* | *1,237.4* | *1,650.0* | *412.5* | *33.3* |
| ներքին վարկեր և փոխառություններ | - | - | - | - |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | 1,154.9 | 1,452.3 | *297.3* | 25.7 |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | *77.1* | 188.5 | *111.4* | *144.4* |
| ներքին երաշխիքներ | 5.4 | 9.2 | *3.8* | 71.2 |
| **ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք** | **219.8** | **217.0** | ***(2.8)*** | **(1.3)** |
| ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր | 48.7 | 34.3 | (14.4) | (29.6) |

| մլն ԱՄՆ դոլար | 31.12.2021 | 31.12.2022 | Փոփոխություն | |
|---|---|---|---|---|
| | | | մլն ԱՄՆ դոլար | % |
| ***ՀՀ պետական պարտք*** | ***9,225.6*** | ***10,637.7*** | ***1,412.0*** | ***15.3*** |
| **ՀՀ կառավարության պարտք** | **8,767.9** | **10,086.4** | ***1,318.4*** | **15.0** |
| *արտաքին պարտք* | *6,190.7* | *5,894.1* | *(296.6)* | *(4.8)* |
| արտաքին վարկեր և փոխառություններ | 4,481.1 | 4,503.9 | *22.8* | 0.5 |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | 112.4 | 111.8 | *(0.6)* | (0.5) |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | 1,589.3 | 1,271.0 | *(318.3)* | (20.0) |
| արտաքին երաշխիքներ | 7.9 | 7.5 | *(0.4)* | (5.6) |
| *ներքին պարտք* | *2,577.2* | *4,192.3* | *1,615.0* | *62.7* |
| ներքին վարկեր և փոխառություններ | - | | - | - |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | 2,405.4 | 3,690.0 | *1,284.6* | 53.4 |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | 160.7 | 479.0 | 318.3 | 198.1 |
| ներքին երաշխիքներ | 11.2 | 23.3 | *12.1* | 108.8 |
| **ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք** | **457.7** | **551.3** | **93.6** | **20.5** |
| ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր | 101.4 | 87.1 | (14.4) | (14.2) |

# Կարևոր իրադարձությունները

11.01.2022թ. / 18.01.2022թ. ՀՀ կառավարության ու Արժույթի Միջազգային Հիմնադրամի միջև բյուջետային աջակցության նպատակով նամակ-համաձայնագրերի միջոցով ստորագրվել է նոր վարկային համաձայնագիր՝ «Stand By Arrangement» ծրագրի շրջանակներում 51.428 մլն ՀՓԻ չափով:

18.03.2022թ. ՀՀ կառավարության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև ստորագրվել է նոր վարկային համաձայնագիր՝ «Պետական կառավարման համակարգի արդիականացման IV ծրագիր»: Վարկի գումարը կազմել է 26.5 մլն Եվրո, այն տրամադրվել է 25 տարի ժամկետով, որից 15 տարին արտոնյալ է: Վարկի տոկոսադրույքը լողացող է՝ 6-ամսյա Euribor դրույքաչափ + փոփոխական մարժա:

09.06.2022թ. ՀՀ կառավարության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև ստորագրվել է նոր վարկային համաձայնագիր՝ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»: Վարկի գումարը կազմել է 22.6 մլն Եվրո, այն տրամադրվել է 25 տարի ժամկետով, որից 15 տարին արտոնյալ է: Վարկի տոկոսադրույքը լողացող է՝ 6-ամսյա Euribor դրույքաչափ + փոփոխական մարժա:

17.11.2022թ. ՀՀ կառավարության ու Ասիական Զարգացման Բանկի միջև ստորագրվել է նոր վարկային համաձայնագիր՝ «Հարկաբյուջետային կայունության եւ ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր - ենթածրագիր I»: Վարկի գումարը կազմել է 100.0 մլն ԱՄՆ դոլար, այն տրամադրվել է 15 տարի ժամկետով, որից 3 տարին արտոնյալ է: Վարկի տոկոսադրույքը լողացող է՝ SOFR դրույքաչափ + 0.6%:

17.11.2022թ. ՀՀ կառավարության ու Զարգացման Ֆրանսիական Գործակալության միջև ստորագրվել է նոր վարկային համաձայնագիր՝ «Բյուջետային աջակցության վարկ (Հարկաբյուջետային կայունության եւ ֆինանսական շուկաների զարգացման ծրագրի համաֆինանսավորում)»: Վարկի գումարը կազմել է 100.0 մլն եվրո, այն տրամադրվել է 20 տարի ժամկետով, որից 5 տարին արտոնյալ է: Վարկի տոկոսադրույքը կարող է լինել լողացող կամ ֆիքսված՝ որոշվում է մասհանման հայտի ներկայացման ժամանակ:

# Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին




| մլրդ դրամ | 01.01.2022-31.12.2022 | % |
|---|---|---|
| **Ընդամենը ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին** | ***318.2*** | ***100.0*** |
| ***ներքին աղբյուրներից*** | **252.0** | **79.2** |
| պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտք | *252.0* | |
| տեղաբաշխումից մուտք | 399.8 | |
| մարում / հետգնում | (147.8) | |
| ***արտաքին աղբյուրներից*** | **66.2** | **20.8** |
| վարկերի և փոխառությունների գծով զուտ մուտք | *66.2* | |
| վարկերի և փոխառությունների ստացում | 165.79 | |
| նպատակային վարկեր | 50.3 | |
| բյուջետային աջակցության վարկեր | 115.5 | |
| վարկերի և փոխառությունների մարում | (99.6) | |
| արտարժութային պետական պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտք | - | |
| տեղաբաշխումից մուտք | - | |
| մարում / հետգնում | - | |

# Կառավարության պարտքի սպասարկումը (տոկոսավճարներ)




| մլրդ դրամ | 01.01.2022-31.12.2022 | % |
|---|---|---|
| **Ընդամենը տոկոսավճարներ** | **198.3** | **100.0** |
| *ներքին տոկոսավճարներ* | *125.9* | *63.5* |
| պետական գանձապետական պարտատոմսերի գծով | 125.9 | 63.5 |
| *արտաքին տոկոսավճարներ* | *72.4* | *36.5* |
| արտաքին աղբյուրներից ստացված վարկերի գծով | 35.0 | 17.7 |
| արտարժույթով պետական պարտատոմսերի գծով | 37.4 | 18.8 |

# Կառավարության պարտքը բնութագրող ցուցանիշները և 2022-2024 թթ. ուղենիշները

| | Ուղենիշ | 31.12.2021թ. փաստացի | 31.12.2022թ. Փաստացի |
|---|---|---|---|
| Միջին կշռված տոկոսադրույք, % | | 4.7 | 6.3 |
| **Վերաֆինանսավորման ռիսկ** | | | |
| Մինչև մարումը մնացած միջին ժամկետ, տարի | 8 - 11 | 8.4 | 7.7 |
| Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա պարտքի տեսակարար կշիռ, % | | 5.6 | 8.0 |
| Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին), % | առավելագույնը 20% | 10.5 | 12.9 |
| **Տոկոսադրույքի ռիսկ** | | | |
| Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի տեսակարար կշիռ, % | առնվազն 80% | 82.9 | 83.5 |
| Մինչև տոկոսադրույքի վերաֆիքսումը մնացած միջին ժամկետ, տարի | | 7.2 | 6.6 |
| Առաջիկա 365 օրվա ընթացքում վերաֆիքսվող պարտքի տեսակարար կշիռ, % | | 22.2 | 23.3 |
| **Փոխարժեքի ռիսկ** | | | |
| Ներքին պարտքի տեսակարար կշիռ, % | առնվազն 25% | 29.4 | 41.6 |
| ՀՀ դրամով ներգրավված պարտքի տեսակարար կշիռ, % | առնվազն 25% | 28.8 | 37.9 |

# Կառավարության պարտքի մարման և սպասարկման ընդհանրացված ժամանակացույցը




## Կառավարության պարտքի մարման ժամանակացույցը




## Կառավարության պարտքի սպասարկման ժամանակացույցը



# Կառավարության պարտքի կառուցվածքը (1)

## Ըստ գործիքակազմի




## Ըստ ռեզիդենտության




## Ըստ ներգրավման արժույթի




## Ըստ տոկոսադրույքի տեսակի



# Կառավարության պարտքի կառուցվածքը (2)

## Ըստ ներգրավման արժույթի




## Ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության




## Ըստ մինչև մարումը մնացած միջին ժամկետայնության



# Պետական գանձապետական պարտատոմսերը (1)

| | 31.12.2021 | 31.12.2022 |
|---|---|---|
| Շրջանառության մեջ գտնվող ծավալ, մլրդ դրամ | 1,208.9 | 1,496.3 |
| Միջին կշռված եկամտաբերություն, % | 10.08 | 10.55 |
| Միջին կշռված ժամկետայնություն, օր | 3,761 | 3,204 |

| Պարտատոմսի տեսակ | Մինչև մարումը մնացած միջին կշռված ժամկետ, օր | Միջին կշռված եկամտաբերություն, % |
|---|---|---|
| Կարճաժամկետ պարտատոմսեր | 153 | 11.08 |
| Միջնաժամկետ պարտատոմսեր | 806 | 9.39 |
| Երկարաժամկետ պարտատոմսեր | 4,946 | 11.16 |
| Խնայողական պարտատոմսեր | 486 | 9.19 |

2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին առաջնային շուկայում տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.55%, իսկ միջին կշռված ժամկետայնությունը՝ 1,762 օր:

### Ըստ պարտատոմսի տեսակի




### Ըստ մինչև մարումը մնացած ժամկետի




### Շրջանառության մեջ գտնվող ուղենշային պարտատոմսեր

| ԱՄՏԾ | Արժեկտրոնի եկամտաբերություն | Շրջանառության ծավալ, մլրդ դրամ | Մարման օր |
|---|---|---|---|
| AMGN36294251 | 9.25% | 82.18 | 29-Ապր-2025 |
| AMGN60294276 | 9.40% | 54.23 | 29-Ապր-2027 |
| AMGB1029A292 | 9.00% | 147.76 | 29-Հկտ-2029 |
| AMGB1129A316 | 8.00% | 194.80 | 29-Հկտ-2031 |
| AMGB2029A366 | 13.00% | 71.00 | 29-Հկտ-2036 |
| AMGB3129A504 | 9.75% | 125.14 | 29-Հկտ-2050 |

### Ըստ ներդրողների տեսակի




* ներառում է ռեպո / հակադարձ ռեպո գործարքները

# Պետական գանձապետական պարտատոմսերը (2)

## Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդները 2022 թ. դեկտեմբերին

| Տեղաբաշխման աճուրդի ամսաթիվ | Վերջնահաշվարկի ամսաթիվ | ԱՄՏԾ | Տեղաբաշխման տեսակ | Տեղաբաշխման ենթակա ծավալ | Պահանջարկ | Տեղաբաշխված ծավալ | Գին | Միջին կշռ. եկամտաբերություն | Սահմանային եկամտաբերություն | Մարման ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5-Դկտ-2022 | 6-Դկտ-2022 | AMGT5204C238 | Աճուրդ | 5,000,000,000 | 7,250,000,000 | 5,000,000,000 | 89.36 | 11.8100% | 11.8600% | 4-Դկտ-2023 |
| 6-Դկտ-2022 | 6-Դկտ-2022 | AMGT5204C238 | Ուղղակի վաճառք | | | 88,040,000 | 89.36 | 11.8100% | | 4-Դկտ-2023 |
| 13-Դկտ-2022 | 14-Դկտ-2022 | AMGN36294251 | Աճուրդ | 35,000,000,000 | 51,076,200,000 | 25,676,200,000 | 95.71 | 11.9460% | 11.9995% | 29-Ապր-2025 |
| 14-Դկտ-2022 | 14-Դկտ-2022 | AMGN36294251 | Լրացուցիչ | 5,135,240,000 | 2,279,200,000 | 2,279,200,000 | 95.71 | 11.9460% | 11.9460% | 29-Ապր-2025 |
| 14-Դկտ-2022 | 14-Դկտ-2022 | AMGN36294251 | Ուղղակի վաճառք | | | 31,175,000 | 95.71 | 11.9460% | | 29-Ապր-2025 |
| 19-Դկտ-2022 | 20-Դկտ-2022 | AMGT5202A236 | Աճուրդ | 5,000,000,000 | 7,217,400,000 | 5,000,000,000 | 91.38 | 11.8747% | 11.9900% | 2-Հկտ-2023 |
| 20-Դկտ-2022 | 20-Դկտ-2022 | AMGT5202A236 | Ուղղակի վաճառք | | | 21,165,000 | 91.38 | 11.8747% | | 2-Հկտ-2023 |
| 26-Դկտ-2022 | 27-Դկտ-2022 | AMGT52317238 | Աճուրդ | 5,000,000,000 | 11,530,210,000 | 5,000,000,000 | 93.37 | 11.8314% | 11.8900% | 31-Հլս-2023 |
| 27-Դկտ-2022 | 27-Դկտ-2022 | AMGT52317238 | Լրացուցիչ | 1,000,000,000 | 935,000,000 | 935,000,000 | 93.37 | 11.8314% | 11.8314% | 31-Հլս-2023 |
| 27-Դկտ-2022 | 27-Դկտ-2022 | AMGT52317238 | Ուղղակի վաճառք | | | 209,667,000 | 93.37 | 11.8314% | | 31-Հլս-2023 |
| 26-Դկտ-2022 | 27-Դկտ-2022 | AMGT52161230 | Աճուրդ | 5,000,000,000 | 19,720,000,000 | 5,000,000,000 | 99.40 | 10.9391% | 10.9877% | 16-Դկտ-2023 |
| 27-Դկտ-2022 | 27-Դկտ-2022 | AMGT52161230 | Լրացուցիչ | 1,000,000,000 | 900,000,000 | 900,000,000 | 99.40 | 10.9391% | 10.9391% | 16-Դկտ-2023 |
| 27-Դկտ-2022 | 27-Դկտ-2022 | AMGT52161230 | Ուղղակի վաճառք | | | 26,550,000 | 99.40 | 10.9391% | | 16-Դկտ-2023 |
| **Ընդամենը** | | | | **62,135,240,000** | **100,908,010,000** | **50,166,997,000** | | **11.7921%** | | |

## Պարտատոմսերի հետգնումների աճուրդները 2022 թ. դեկտեմբերին

| Հետգնման աճուրդի ամսաթիվ | Վերջնահաշվարկի ամսաթիվ | ԱՄՏԾ | Հետգնման հայտարարված ծավալ | Առաջարկ | Հետգնված ծավալ | Գին | Միջին կշռ. եկամտաբերություն | Սահմանային եկամտաբերություն | Մարման ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| **Ընդամենը** | | | - | - | - | | | | |

# Պետական գանձապետական պարտատոմսերը (3)






# Գանձապետական պահառու

| | 31.12.2021թ. | 31.12.2022թ. |
|---|---|---|
| ԳՊ-ի շրջանառության ծավալը (մլն դրամ) | 6,017.1 | 6,116.2 |
| ԳՊ-ի կշիռը պետական գանձապետական պարտատոմսերում, % | 0.50 | 0.41 |
| Ընդամենը դեպո հաշիվների քանակը (աճողական) | 1,774 | 1,856 |

2022 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ԳՊ-ի միջոցով կատարված ներդրումների ծավալը կազմել է 7,722.3 մլն դրամ, որից 2,895.6 մլն դրամը՝ խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի գծով:

**ԳՊ ներդրողների կառուցվածքը**




**2022թ. Հունվար-դեկտեմբերին կատարված ներդրումների կառուցվածքը**




| Վաճառքում առկա խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի պայմաններն առ 31.12.2022թ. | |
|---|---|
| **Մարման ժամկետ** | **Արժեկտրոնային եկամտաբերություն, %** |
| **6 ամիս** | 8.5 |
| **12 ամիս** | 9.0 |
| **24 ամիս** | 9.2 |
| **36 ամիս** | 9.5 |

# Կառավարության արտաքին վարկերը և փոխառությունները

| | 31.12.2021 | 31.12.2022 |
|---|---|---|
| **Պարտքի մնացորդը (մլն ԱՄՆ դոլար)** | **4,481.1** | **4,503.9** |
| *այդ թվում՝* | | |
| միջազգային կազմակերպությունների գծով | 3,467.6 | *3,495.9* |
| օտարերկրյա պետությունների գծով | 996.8 | 994.2 |
| առևտրային բանկերի վարկերի գծով | 16.7 | 13.7 |
| **Միջին կշռված տոկոսադրույքը, %** | 1.5 | 3.2 |
| **Մինչև մարումը մնացած միջին ժամկետը, տարի** | 7.9 | 7.5 |

| **Կատարված գործառնությունները** (2022 թ. հունվար-դեկտեմբեր, մլն ԱՄՆ դոլար) | |
|---|---|
| Տոկոսավճար | 81.6 |
| Մայր գումարի մարում | 228.5 |
| Վարկային միջոցների ստացում | 397.9 |

## Արտաքին վարկերի կառուցվածքն ըստ վարկատուների



# Արտարժութային պետական պարտատոմսերը (1)

| Տեղաբաշխման պայմանները | 2025թ. մարվող պարտատոմսեր | 2029թ. մարվող պարտատոմսեր | 2031թ. մարվող պարտատոմսեր |
|---|---|---|---|
| Թողարկող | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն |
| Թողարկման ձևաչափ | RegS / 144A | RegS / 144A | RegS / 144A |
| Վարկանիշ | Ba3 (Moody's) / B+ (Fitch) | Ba3 (Moody's) / B+ (Fitch) | Ba3 (Moody's) / B+ (Fitch) |
| ԱՄՏԾ (ISIN) | US042207AB67 / XS1207654853 | US042207AC41 / XS2010043904 | US042207AD24 / XS2010028939 |
| Դասիչ | IMBIG | IMBIG | IMBIG |
| Տեղաբաշխման ծավալ | 500,000,000 ԱՄՆ դոլար | 500,000,000 ԱՄՆ դոլար | 750,000,000 ԱՄՆ դոլար |
| Գնանշման օր | 2015թ. մարտի 19 | 2019թ. սեպտեմբերի 19 | 2021թ. հունվարի 26 |
| Գործարքի կնքման օր | 2015թ. մարտի 26 | 2019թ. սեպտեմբերի 26 | 2021թ. փետրվարի 2 |
| Մարման ժամկետ | 2025թ. մարտի 26 | 2029թ. սեպտեմբերի 26 | 2031թ. փետրվարի 2 |
| Ժամկետայնություն | 10 տարի | 10 տարի | 10 տարի |
| Մինչև մարումը մնացած ժամկետ | 2.2 տարի | 6.7 տարի | 8.1 տարի |
| Մարման եղանակ | միանվագ՝ ժամկետի վերջում | միանվագ՝ ժամկետի վերջում | միանվագ՝ ժամկետի վերջում |
| Արժեկտրոն | 7.15% | 3.95% | 3.60% |
| Արժեկտրոնի վճարման հաճախականություն | կիսամյակային՝<br>մարտի 26 և սեպտեմբերի 26 | կիսամյակային՝<br>մարտի 26 և սեպտեմբերի 26 | կիսամյակային՝<br>փետրվարի 2 և օգոստոսի 2 |
| Արժեկտրոնի վճարման առաջին ամսաթիվ | 2015թ. սեպտեմբերի 26 | 2020թ. մարտի 26 | 2021թ. օգոստոսի 2 |
| Եկամտաբերություն | 7.50% | 4.20% | 3.875% |
| Ուղենիշ | 2025թ. մարման ենթակա ԱՄՆ գանձ. պարտատոմսեր՝ 2.0% | 2029թ. մարման ենթակա ԱՄՆ գանձ. պարտատոմսեր՝ 1.625% | 2030թ. մարման ենթակա ԱՄՆ գանձ. պարտատոմսեր՝ 1.039% |
| Շեղումը ուղենշի նկատմամբ | + 551.8 բ.կ. | + 242.8 բ.կ. | + 283.6 բ.կ. |
| Շեղումը միջին սվոպի նկատմամբ | + 543.7 բ.կ. | + 255 բ.կ. | + 280.2 բ.կ. |
| Ցուցակում | Իռլանդական ֆոնդային բորսա | Իռլանդական ֆոնդային բորսա | Իռլանդական ֆոնդային բորսա |
| Գլխավոր տեղաբաշխողներ | J.P.Morgan, Deutsche Bank, HSBC | J.P.Morgan, Citigroup | J.P.Morgan, Citigroup, HSBC |
| Տեղաբաշխման գին | 97.568 | 97.976 | 97.738 |
| Տեղաբաշխումից մուտք | 487,840,000 ԱՄՆ դոլար | 489,880,000 ԱՄՆ դոլար | 733,035,000 ԱՄՆ դոլար |
| | | | |
| Հետգնված ծավալ | - ԱՄՆ դոլար | - ԱՄՆ դոլար | - ԱՄՆ դոլար |
| Մարված ծավալ | - ԱՄՆ դոլար | - ԱՄՆ դոլար | - ԱՄՆ դոլար |
| Շրջանառության մեջ գտնվող ծավալ | 500,000,000 ԱՄՆ դոլար | 500,000,000 ԱՄՆ դոլար | 750,000,000 ԱՄՆ դոլար |
| | | | |
| Վճարված արժեկտրոն (աճողական) | 268,125,000 ԱՄՆ դոլար | 59,250,000 ԱՄՆ դոլար | 40,500,000 ԱՄՆ դոլար |
| Վճարված զեղչատոկոս և հավելավճար | 12,160,000 ԱՄՆ դոլար | 10,120,000 ԱՄՆ դոլար | 16,965,000 ԱՄՆ դոլար |

# Արտարժութային պետական պարտատոմսերը (2)




Աղբյուր՝ Bloomberg

# Կառավարության երաշխիքները

| Պրինցիպալ | Բենեֆիցիար | 31.12.2021 | 31.12.2022 |
|---|---|---|---|
| **Ընդամենը երաշխիքներ, մլն ԱՄՆ դոլար** | | **120.5** | **117.8** |
| **Արտաքին երաշխիքներ** | | **109.3** | **94.5** |
| ՀՀ ԿԲ-ի արտաքին վարկերի գծով տրամադրված երաշխիքներ | | 101.4 | 87.1 |
| ՀՀ կենտրոնական բանկ | Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ | 38.2 | 36.2 |
| ՀՀ կենտրոնական բանկ | Ասիական Զարգացման Բանկ | 12.8 | 11.5 |
| ՀՀ կենտրոնական բանկ | Գերմանիա (KfW) | 50.4 | 39.3 |
| Այլ արտաքին երաշխիքներ | | 7.9 | 7.5 |
| «ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ | Էռստե Բանկ (Ավստրիա) | 7.9 | 7.5 |
| **Ներքին երաշխիքներ** | | **11.2** | **23.3** |
| «ՍՊԱՅԿԱ» ՍՊԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 2.4 | - |
| «ԱՐՏԱՇԱՏ-ՎԻՆԿՈՆ» ՓԲԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 1.7 | 1.7 |
| «ՎԻԼ ՖՈՒԴ» ՍՊԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 0.2 | 0.0 |
| «ԵՐԱՍԽԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, 01.11.2021թ. | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 0.6 | 0.6 |
| «ԳԵՏԱՓԻ ԳԻՆՈՒ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 0.3 | 0.3 |
| «ՎԵԴԻ ԱԼԿՈ» ՓԲԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 0.9 | 1.0 |
| «ՇԱՏՕ ԱՌՆՕ» ՍՊԸ | «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ | 0.2 | 0.2 |
| «ԱՍՏԱՖՅԱՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ | «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ | 0.2 | 0.2 |
| «ՎԵԴԻ ԱԼԿՈ» ՓԲԸ | «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ | 0.5 | 0.6 |
| «ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, 14.10.2021թ. | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ | 4.2 | 5.1 |
| «ԻՋԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ, ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ | «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ | - | 1.3 |
| «ԵՐԵՎԱՆԻ ՇՈԿՈԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | - | 0.6 |
| «ԱՐԱՐԱՏԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | - | 1.1 |
| «ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, 28.11.2022թ. | «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ | - | 3.2 |
| «ԵՐԱՍԽԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, 29.11.2022թ. | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | - | 0.4 |
| «ՄԱՊ» ՓԲԸ | «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ | - | 2.3 |
| «ԱՐԱՐԱՏԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, 02.12.2022թ | «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ | - | 0.6 |
| «ԳԵՏԱՓԻ ԳԻՆՈՒ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, 20.12.2022թ. | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | - | 0.6 |
| «ԱՐՏԱՇԱՏ-ՎԻՆԿՈՆ» ՓԲԸ, 23.12.2022թ. | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | - | 1.8 |
| «ՎԵԴԻ ԱԼԿՈ» ՓԲԸ, 26.12.2022թ. | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | - | 1.7 |

**Կառուցվածքն ըստ ռեզիդենտության**




**ՀՀ կառավարության կողմից երաշխիքների մարման և սպասարկման գծով կատարված վճարումները՝ պայմանավորված պրինցիպալի կողմից իր վճարային պարտավորությունների չկատարմամբ (2022 թ. հունվար-դեկտեմբեր)**

- մլն ԱՄՆ դոլար

# Ամփոփ տարեկան ցուցանիշները և գործակիցները (1)

| | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ** | 1,900.6 | 2,225.9 | 2,631.4 | 2,988.4 | 3,082.5 | 3,277.3 | 3,923.9 | 4,209.8 | 3,969.7 |
| **ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար** | 4,001.6 | 4,601.4 | 5,437.4 | 6,173.1 | 6,372.1 | 6,831.9 | 7,508.5 | 8,767.9 | 10,086.4 |
| %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ | 39.4 | 44.1 | 51.9 | 53.7 | 51.2 | 50.1 | 63.5 | 60.3 | 46.7 |
| | | | | | | | | | |
| **Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, %** | | | | | | | | | |
| ներքին պարտք | 16.2 | 16.4 | 20.9 | 20.4 | 21.8 | 22.5 | 25.4 | 29.4 | 41.6 |
| արտաքին պարտք | 83.8 | 83.6 | 79.1 | 79.6 | 78.2 | 77.5 | 74.6 | 70.6 | 58.4 |
| **Կառուցվածքն ըստ գործիքակազմի, %** | | | | | | | | | |
| արտաքին վարկեր և փոխառություններ | 67.1 | 63.8 | 62.2 | 65.1 | 65.0 | 63.0 | 62.1 | 51.1 | 44.7 |
| ներքին վարկեր և փոխառություններ | 0.1 | - | - | - | - | - | - | - | - |
| պետական գանձապետական պարտատոմսեր | 15.3 | 14.4 | 19.3 | 18.4 | 19.1 | 20.8 | 24.4 | 28.7 | 37.7 |
| արտարժութային պետական պարտատոմսեր | 17.5 | 21.7 | 18.4 | 16.2 | 15.7 | 16.1 | 13.3 | 20.0 | 17.4 |
| արտաքին երաշխիքներ | - | - | - | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| ներքին երաշխիքներ | 0.05 | 0.04 | 0.13 | 0.15 | 0.14 | - | - | 0.1 | 0.2 |
| **Արժութային կառուցվածքը, %** | | | | | | | | | |
| ՀՀ դրամով ներգրավված պարտք | 15.3 | 14.4 | 19.3 | 18.4 | 19.1 | 20.8 | 24.4 | 28.8 | 37.9 |
| արտարժույթով ներգրավված պարտք | 84.7 | 85.6 | 80.7 | 81.6 | 80.9 | 79.2 | 75.6 | 71.2 | 62.1 |
| USD | 30.2 | 37.5 | 39.5 | 42.0 | 43.6 | 43.9 | 38.3 | 41.6 | 36.8 |
| SDR | 40.9 | 35.7 | 29.3 | 26.5 | 24.1 | 21.1 | 23.0 | 18.1 | 14.9 |
| EUR | 7.2 | 6.6 | 7.0 | 8.7 | 9.2 | 10.6 | 10.9 | 8.9 | 8.6 |
| JPY | 6.3 | 5.2 | 4.4 | 3.9 | 3.7 | 3.3 | 3.0 | 2.2 | 1.6 |
| AED | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.04 | 0.03 |
| CNY | - | 0.4 | 0.4 | 0.4 | 0.4 | 0.3 | 0.3 | 0.3 | 0.2 |
| **Կառուցվածքն ըստ մինչև մարումը մնացած միջին ժամկետայնության, %** | | | | | | | | | |
| կարճաժամկետ | 3.2 | 2.5 | 4.4 | 3.0 | 2.6 | 4.4 | 3.1 | 3.1 | 5.0 |
| միջնաժամկետ | 10.2 | 21.8 | 21.5 | 23.4 | 22.7 | 16.4 | 27.9 | 27.3 | 29.3 |
| երկարաժամկետ | 86.6 | 75.7 | 74.0 | 73.5 | 74.6 | 79.2 | 69.0 | 69.6 | 65.7 |

# Ամփոփ տարեկան ցուցանիշները և գործակիցները (2)

| | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Կառուցվածքն ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %** | | | | | | | | | |
| կարճաժամկետ | 0.7 | 1.0 | 3.0 | 0.8 | 1.0 | 0.7 | 1.2 | 1.2 | 2.6 |
| միջնաժամկետ | 8.0 | 6.9 | 8.1 | 8.2 | 7.6 | 6.9 | 6.9 | 9.1 | 13.0 |
| երկարաժամկետ | 91.3 | 92.1 | 88.8 | 91.1 | 91.4 | 92.4 | 91.9 | 89.7 | 84.3 |
| **Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, %** | | | | | | | | | |
| լողացող տոկոսադրույքով | 10.8 | 10.5 | 12.5 | 13.5 | 15.0 | 16.2 | 19.6 | 17.1 | 16.5 |
| ֆիքսված տոկոսադրույքով | 89.2 | 89.5 | 87.5 | 86.5 | 85.0 | 83.8 | 80.4 | 82.9 | 83.5 |
| | | | | | | | | | |
| **ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %** | 4.2 | 4.5 | 4.9 | 4.9 | 5.0 | 4.8 | 4.3 | 4.7 | 6.3 |
| **ՀՀ կառավարության պարտքի մինչև մարումը մնացած միջին ժամկետը, տարի** | 9.8 | 9.7 | 9.2 | 9.0 | 8.7 | 9.1 | 8.8 | 8.4 | 7.7 |
| | | | | | | | | | |
| **ՀՀ կառավարության պարտքի գծով տոկոսավճար, մլրդ դրամ** | 61.6 | 74.1 | 98.3 | 122.1 | 139.0 | 157.5 | 164.7 | 180.8 | 198.3 |
| %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ | 1.3 | 1.5 | 1.9 | 2.2 | 2.3 | 2.4 | 2.7 | 2.6 | 2.3 |
| %-ներով պետական բյուջեի ծախսերի նկատմամբ | 5.0 | 5.3 | 6.8 | 8.1 | 9.6 | 9.7 | 8.7 | 9.0 | 8.8 |
| | | | | | | | | | |
| **Պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին, մլրդ դրամ** | 83.8 | 316.8 | 409.4 | 278.7 | 132.9 | 233.4 | 354.6 | 591.0 | 318.2 |
| %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ | 1.7 | 6.3 | 8.1 | 5.0 | 2.2 | 3.6 | 5.7 | 8.5 | 3.7 |
| ներքին աղբյուրներից, % | 17.9 | 4.4 | 41.8 | 16.4 | 36.1 | 43.7 | 84.7 | 40.6 | 79.2 |
| արտաքին աղբյուրներից, % | 82.1 | 95.6 | 58.2 | 83.6 | 63.9 | 56.3 | 15.3 | 59.4 | 20.8 |

# Սահմանումները և մեթոդաբանությունը (1)

**Ինստիտուցիոնալ ծածկույթը**

Կառավարության պարտքը ներառում է կառավարության բոլոր ուղղակի պարտքային պարտավորությունները, որոնց մարումն ու սպասարկումը կատարվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, և կառավարության կողմից երաշխավորված պարտքային պարտավորությունները:

**Կիրառվող դասակարգումները**

Կառավարության պարտքը դասակարգվում է ըստ հետևյալ հատկանիշների.

- *ըստ ռեզիդենտության՝ ներքին և արտաքին,*
- *ըստ ժամկետայնության (թողարկման և մինչև մարումը մնացած ժամկետի)՝ կարճաժամկետ (մինչև մեկ տարին ներառյալ), միջնաժամկետ (1-5 տարին ներառյալ), երկարաժամկետ (5-ից ավելի տարով),*
- *ըստ գործիքակազմի՝ վարկեր և փոխառություններ, պետական գանձապետական պարտատոմսեր, արտարժութային պետական պարտատոմսեր, երաշխիքներ,*
- *ըստ արժույթի՝ ազգային արժույթով և արտարժույթով,*
- *ըստ տոկոսադրույքի տեսակի՝ ֆիքսված և լողացող:*

**Հաշվառման սկզբունքը**

Կառավարության պարտքի վերաբերյալ տվյալները հաշվառվում են անվանական արժեքով՝ համախառն սկզբունքով և դրամարկղային եղանակով (բացառությամբ արտաքին վարկերի գծով մասհանումների, որոնք հաշվառվում են պարտավորության ստանձնման օրվա դրությամբ):

**«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանված են հետևյալ հասկացությունները և մեթոդաբանական մոտեցումները.**

- ***պարտքային պարտավորություն՝*** փոխառության (այդ թվում՝ ներքին և արտաքին շուկաներում տեղաբաշխվող արժեթղթերի) կամ վարկային պայմանագրով ստացված և որոշակի պահի դրությամբ չմարված գումարը, ներառյալ՝ ժամկետում չմարված տոկոսագումարը, ինչպես նաև տրամադրված պետական երաշխիքների գումարը,
- ***պետական պարտք՝*** Հայաստանի Հանրապետության անունից և ՀՀ կենտրոնական բանկի անունից (բացառությամբ ռեզիդենտների հանդեպ ԿԲ առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը: Այն կառավարության պարտքի և կենտրոնական բանկի պարտքի հանրագումարն է:
- ***կառավարության պարտք՝*** ՀՀ կառավարության ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը,
- ***կենտրոնական բանկի պարտք՝*** ոչ ռեզիդենտների, օտարերկրյա պետությունների առջև ԿԲ ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը,
- ***ներքին պետական պարտք՝*** ՀՀ անունից՝ կառավարության լիազոր մարմնի կողմից ՀՀ ռեզիդենտների հանդեպ փոխառության կամ վարկային պայմանագրերի հիման վրա ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը,

# Սահմանումները և մեթոդաբանությունը (2)

- ➢ ***արտաքին պետական պարտք***՝ ՀՀ անունից և Կենտրոնական բանկի անունից ՀՀ ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը,
- ➢ ***պետական երաշխիք***՝ որոշակի պահի դրությամբ կառավարության պարտավորությունը (բյուջետային երաշխիքը) փոխատուների և վարկատուների առջև, ինչպես նաև ԿԲ պարտավորությունը ոչ ռեզիդենտ փոխատուների և վարկատուների առջև ամբողջությամբ կամ մասնակի մարելու՝ ՀՀ ռեզիդենտ փոխառուների և վարկառուների կողմից վճարման ենթակա գումարները՝ սահմանված ժամկետներում նրանց կողմից չվճարվելու դեպքում,
- ➢ ***պարտքի մարում*** փոխառության կամ վարկային պայմանագրի հիման վրա պարտքային պարտավորության կատարումը,
- ➢ ***պարտքի սպասարկում*** փոխառության կամ վարկային պայմանագրով նախատեսված տոկոսագումարի, կոմիսիոն վճարի, տուժանքի և այլ վճարի կատարումը,
- ➢ ***ներքին պետական երաշխիքները*** ՀՀ ռեզիդենտներին տրամադրված բյուջետային երաշխիքները,
- ➢ ***արտաքին պետական երաշխիքները*** ոչ ռեզիդենտներին և օտարերկրյա պետություններին ՀՀ և ԿԲ կողմից տրամադրված պետական երաշխիքները:

- Պետական պարտքի կառավարումն իրականացնում են ՀՀ ֆինանսների նախարարությունը և Կենտրոնական բանկը՝ իր պարտքի մասով:
- Ֆինանսների նախարարությունը և ԿԲ իրականացնում են պետական պարտքի գրանցումը, հաշվառումը և պատասխանատու են այդ հաշվառման հավաստիության համար:
- Պետական պարտքը հրապարակվում է ՀՀ ազգային արժույթով. այն կարող է հրապարակվել նաև այլ արժույթներով:
- Պետական պարտքի բաղադրիչներն են *ներքին պետական պարտքը, արտաքին պետական պարտքը* և *պետական երաշխիքները,*
- Պետական պարտքն ըստ ժամկետայնության լինում է *կարճաժամկետ (մինչև 1 տարին ներառյալ), միջնաժամկետ (1-5 տարին ներառյալ)* և *երկարաժամկետ (5-ից ավելի տարով):*
- Եթե միևնույն պարտավորության համար միաժամանակ երաշխիք են տրամադրել կառավարությունը և ԿԲ-ն, ապա պետական պարտքի կազմում հաշվառվում է դրանցից մեկը (առավելագույնը):
- Կառավարության կողմից ԿԲ համար տրամադրված արտաքին պետական երաշխիքը հաշվառվում է որպես ԿԲ պարտք:

**Պետական պարտքի ձևավորման գործիքներն են.**

- ➢ *ֆինանսական, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքված վարկային պայմանագրերը,*
- ➢ *ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերը,*
- ➢ *պետական գանձապետական և արտարժույթով թողարկված պարտատոմսերը,*
- ➢ *ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտքի փոխանցման գործարքի հետևանքով որպես պետական պարտք վերաձևակերպված երրորդ անձանց պարտավորությունները,*
- ➢ *պետական պարտքի վերաձևակերպման պայմանագրերը,*
- ➢ *պետական երաշխիքները:*